

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԱԴՈՆԱ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
էլ. հասցե՝ madona.martirosyan.94@list.ru

DOI: 10.24234/scientific.v1i46.134

ԱՄՓՈՓՈՒՄ

Տիգրան Մեծի կերպարը՝ որպես հայ հզորագույն գահակալներից մեկի, ամենաշատն է հետաքրքրել հունահռոմեական հեղինակներին և ներշնչանքի աղբյուր դարձել եվրոպական մշակույթի գործիչների համար: Դրա խոսուն վկայություններն են այդ երևելի գահակալի պատմագեղարվեստական կերպարի դրսևորումները եվրոպական երաժշտական արվեստում:

Սույն հետազոտության օբյեկտը Տիգրան Մեծի կերպարն է:

Հետազոտության նպատակն է՝ վերլուծել Տիգրան Մեծի կերպարի համակողմանի անդրադարձը եվրոպական երաժշտական արվեստում:

Հետազոտության մեթոդական հիմք են ծառայել պատմահամեմատական, ժամանակագրական, նկարագրական, վերլուծահամադրական, աղբյուրագիտական (Հուստինոս «Փիլիպպոսի պատմությունների» XXXVIII գիրքը, Francesco Silvani «La virtù trionfante dell'amore e dell'odio ovvero Il Tigriane» դրաման) մեթոդները:

Հետազոտության վերջնարդյունքում պարզվել է, որ եվրոպացի երաժիշտները ստեղծել են 41 օպերա, որոնցից շատերում հայոց արքա Տիգրան Մեծը ներկայացվել է գլխավոր կամ մասնակից հերոս: Կոմպոզիտորներին Տիգրան Մեծի պատմական կերպարի հանդեպ հետաքրքրություն է ներշնչել հունահռոմեական հեղինակների գործերում առկա նյութերը: Հոդվածում կոնկրետ ներկայացվել է աշխարահռչակ կոմպոզիտոր Անտոնիո Վիվալդիի Տիգրան Մեծի պատմական կերպարին անդրադարձը, որի հիմքը պատմիչ Պլուտարքոսի «Ձուգահեռ կենսագրություններ» աշխատությունն է: Վիվալդիի «Տիգրան» օպերայի լիբրետոյի համաձայն Հայոց արքայից արքա Տիգրան Մեծի և Պոնտոսի արքա Միհրդատի դուստր Կլեոպատրայի սիրո պատմություն է, թեև հիմնիվեր լիբրետոյում իրականությունը հակագիտական գլխիվայր է ներկայացվել, այնուամենայնիվ օպերան հռչակ է ձեռք բերել և ապրել ու ներկայացվել է բազում անգամ, նաև մեր օրերում:

Քանալի քառեր՝ Տիգրան Մեծ, Կլեոպատրա, Միհրդատ, Անտոնիո Վիվալդի, Նիկոլա Ռոմալդի, Բենեդետտ Միշել, Ֆրանչեսկո Սիլվանի, օպերային արվեստ, երաժշտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը է վերլուծել Տիգրան Մեծի ամբողջական կերպարը, Վիվալդիի «Տիգրան» օպերայում: Խնդիրը հանգում է Տիգրան Մեծի պատմալիրիկական կերպարի բնութագրիչ առանձնահատկությունների բացահայտմանը, այսինքն՝ քննության

ենթարկելու օպերայի ստեղծման ժամանակագրությունը, այն արդիական դարձնելով մինչ մեր օրերը:

Տիգրան Մեծի կերպարի հանդեպ եվրոպացի կոմպոզիտորների հետաքրքրվածությունը և դրա արդյունում մեզ հայտնի օպերաներում նրա դերակատարումը որպես գլխավոր կամ մասնակից հերոսի կարևոր կերպար թույլ է տալիս հանգել այն գաղափարին, որ սա պատմական մի շրջան է, որը, ըստ մեզ, ի դեմս Տիգրան Մեծի կերպարի, հմայել է եվրոպացի կոմպոզիտորներին իր վեհությամբ, հեռավոր Հայաստանում թագավորած արքայի նկատմամբ ունեցած նրանց հետաքրքրությամբ՝ որպես արևելյան միապետի հավաքական կերպարի: Եվրոպացի կոմպոզիտորները փորձել են նրան բնորոշել որպես արևելյան «բռնակալ», ինչպես նրան մինչ այդ բնորոշել էին Հռոմի շահերն սպասարկող պատմիչները, մասնավորապես, Պլուտարքոսը: Եվրոպացի կոմպոզիտորներին Տիգրանի կերպարում գերել է այդ ամեհի տիրակալի մասին այն ժամանակների պատմությունները, որոնցում հայոց արքան որոշող դեր էր կատարում Հին Աշխարհի իրողություններում: Երաժիշտները փորձել են նրան ներկայացնել որպես կրքի մղմանը ենթարկվող հերոս, միևնույն ժամանակ ներկայացնելով նրա արքայական ազնվությունը, հայրենիքի նկատմամբ անմնացորդ սերը, մեղանչողի նկատմամբ ներողամտությունը, անարդարության և դավաճանության նկատմամբ մեծ անհանդուրժողականությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մեծի կերպարին շատերն են անրադարձել որպես պատմական նշանավոր դեմքի: Սակայն առաջադիր նպատակին հասնելու համար կարող ենք ասել, որ ներկայացվող թեման որևէ լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել: Եթե անգամ այդպիսիք առկա են, ապա միայն թուղիկ անդրադարձումով: Մենք փորձ ենք անում ամբողջական ներկայացնել քննվող թեման՝ կիրառելով պատմահամեմատական, ժամանակագրական, նկարագրական, վերլուծա-համադրական, աղբյուրագիտական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տիգրան Երկրորդ Մեծի կերպարը ամենաշատն է հետաքրքրել հունա-հռոմեական հեղինակներին, որի խոսույն վկայություններն են այդ երևելի գահակալի պատմագեղարվեստական կերպարի բազմաբովանդակ դրսևորումները հետագայի եվրոպական երաժշտական արվեստում: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ գրվել է 41 օպերա, որոնցից շատերում Տիգրան Մեծը ներկայանում է որպես գլխավոր կամ մասնակից հերոսի կարևոր կերպար (Sarti, Giuseppe, 1936): Ճշգրտել ենք բոլոր օպերաների հեղինակներին, նրանց ստեղծած օպերաները, որտեղ անդրադարձ կա Տիգրան Մեծի կերպարին: Այս պարագայում ի հայտ է եկել մեկ հարց: Ի՞նչն է մղել եվրոպացի կոմպոզիտորներին հետաքրքրություն դրսևորել Տիգրան Մեծ պատմական անձի նկատմամբ:

Տիգրան Մեծի կերպարին առաջին անդրադարձը գրանցվել է 1651 թ. Փարիզում բեմադրված Պիեռ Կոռնելի «Նիկոմեդ» ողբերգության (Pierre Corneille, 1651) մեջ: Ողբերգության նյութը վերցվել է Հուստինոսի (Justin, Բ.հ. II դ.) Փիլիպպոսի պատմությունների XXXVIII գրքից (Justini, 1823): Լիբրետոյի հեղինակին ներշնչել է հետևյալ հատվածը. «Այն ժամանակ Տիգրանը թագավորում էր Հայաստանում: Վաղուց պարթևներին գերի տրված այս արքայազնը այնուհետև նրանց կողմից հետ է ուղարկվել իր հայրենի թագավորություն: Միհրդատը ցանկանում էր նրան իր դաշնակիցը դարձնել

Հռոմի դեմ պատերազմելու համար, որը երկար ժամանակ էր խորհրդածում այդ մասին, սակայն Տիգրանը հռոմեացիների դեմ ոչ մի դժգոհություն չունեի: Միհրդատը Գորդիոսի օգնությամբ նրան խորհուրդ տվեց հարձակվել Արիոբարզանի վրա, որը թույլ ու տկար արքայազն է: Եվ իր խորամանկ քայլը քողարկելու համար նա նրան կնության տվեց իր դուստր Կլեոպատրային» (Justini, 1823): Այս ամենի պատմականության, դրանից շեղումների փաստին կանդրադառնանք այլ համատեքստում: Ուղղակի ըստ արվեստագիտական մոտեցման՝ օպերայի լիբրետոն ստեղծողը/ները այն առավել հարուստ, լարված դարձնելու ակնկալիքով գրել են, որ Տիգրանը սիրահարված էր Կլեոպատրային և որպես կամավոր՝ Պառնաս կեղծանունով մտել է Միհրդատի զորքում ծառայելու, Կլեոպատրային մոտ լինելու ցանկությամբ:

Վիվալդիի օպերայի պատմությունից


Անտոնիո Վիվալդին հոգևոր և աշխարհիկ բազմաթիվ ստեղծագործությունների, այդ թվում 40-ից ավելի օպերաների հեղինակ է: Այդ թվում է «Տիգրան» օպերան (1724 թ.) (Թովմասյան, 2010):

Ֆրանսահայ երաժիշտ Ալեքսանդր Սիրանոսյանի հայտնաբերած և ֆրանսերեն տպագրած նյութերի համաձայն՝ Վիվալդիի «Տիգրան» օպերայի գրական հիմքը Ֆրանչեսկո Սիլվանիի «Սիրո հաղթանակն ատելության նկատմամբ կամ Տիգրանը», դրաման է: Այդ երկի հիման վրա երաժշտություն են գրել Բենեդետտ Միշելլը (ակտ I), Անտոնիո Վիվալդին (ակտ II), Նիկոլա Ռոմալդին (ակտ III) 1724 թ. (Michael Talbot, 2011): Լիբրետոն բեմադրվել է նաև այլ կոմպոզիտորների կողմից «Տիգրան» անունով (Յոհան Ադոլֆ Հասս, Նեապոլ, 1729 թ., Գեմինիանո Գիակոմելի, Դյուկալ թատրոն, Պլեզանս, 1733թ, Զիովաննի Բատտիստա Լամպունյանի, Վենետիկ, 1747թ) (Siranossian, Yervandian, 2014): Սիլվանիի «Սիրո հաղթանակն ատելության նկատմամբ կամ Տիգրանը» դրամայի հենքը հետևյալն է: Պոնտոսի և Ասիայի այլ գավառների թագավոր Միհրդատը (տեքստում՝ Միհրդատ), ցանկանալով ընդարձակել իր իշխանությունը, ծրագրում է դատերը՝ Կլեոպատրային կնության տալ հայոց թագավոր Տիգրանին, որպեսզի բարելավի հարաբերություններն այդ երկրի հետ, որ մինչ այդ շատ լարված էր: Տիգրան թագավորն իր հերթին սիրահարված է Կլեոպատրային այն պահից, երբ տեսել է նրա դիմանկարը: Նրա հետ մերձենալու համար նա միացել է Միհրդատի բանակին՝ Ֆառնակես (Պառնաս) անունով և հաղթել բազմաթիվ մարտերում՝ նվաճելով Նիկոմեդեսի (Բյութանիա) և Արիոբարզանեսի (Կապադոկիա) թագավորությունները: Կլեոպատրան ևս սիրահարված է Ֆառնակես Տիգրանին, իսկ Միհրդատը, որը այրի է,

սիրահարված է Ապամիային: Բայց վերջինս նույնպես սիրահարված է Ֆառնակես-Տիգրանին և դրդում է եղբորը՝ Օրոնտեին, ամուսնանալ Կլեոպատրայի հետ: Ի վերջո, հաղթում է Տիգրանի առաքինությունը և Կլեոպատրայի համառությունը:

Փաստացի պատմական հենքից հեռու այս գրական հենքը, այնուամենայնիվ, շատ արագ հռչակ է ձեռք բերել և առավել հարատև է դարձել երեք հեղինակներից մեկի՝ Անտոնիո Վիվալդիի օպերայի շնորհիվ: Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ»

(I դ.) գործից ոգեշնչված՝ Վիվալդին բեմադրել է Հայոց արքա Տիգրան Մեծի և նրա կին՝ Պոնտոսի Միհրդատ արքայի դուստր Կլեոպատրայի մասին լիբրետոն: Հետաքրքրականն այն է, որ տվյալ լիբրետոն փոխառվել է Պիետրո Անտոնիո Բերնարդոնիի գրքից: Մինչ օրս պաշտոնապես ընդունված է, որ Սիլվանին ոգեշնչվել է իրեն նախորդող, 1691 թ. ստեղծված «Սիրո հաղթանակն ատելության նկատմամբ կամ Տիգրանը» լիբրետոյից: Հերոսների անունները, նրանց թիվը և անունները տեղափոխվել են Հայաստանի և Պոնտոսի թագավորություններ: Այս հետազոտության կարևորագույն արժանիքներից է, որ ի հայտ է բերել Սիլվանիի լիբրետոյին նախորդող մի գործ, որի հերոսներն ու փաստերը նույնական են: Խոսքը Պիետրո Անտոնիո



Բերնարդոնիի «Տիգրանը Հայոց թագավոր» լիբրետոյի մասին է: Անտոնիո Մարիա Բոնոնչինիի կողմից գործիքավորված այս լիբրետոն գրվել է 1710 թ. Վիեննայում: Այն հավատարիմ է սյուժետային գծին, որ Սիլվանին օգտագործել է «Սիրո հաղթանակն ատելության նկատմամբ կամ Տիգրանը» լիբրետոյում: Այն վերաբերում է նաև Կառլո Անտոնիոյի 1741 թ. ստեղծված «Տիգրան» գործին: Հռոմում ստեղծված այս աշխատանքն ավելի հայտնի է որպես «Վիվալդիի Տիգրան»: Գրական ամբողջության տեսանկյունից այն երեք հեղինակների՝ Բենեդետտո Միշելի (ակտ I), Անտոնիո Վիվալդիի (ակտ II), Նիկոլա Բոմալդիի (ակտ III) աշխատանք է: Դերասանական ամբողջ կազմը բաղկացած է եղել տղամարդկանցից: Սիլվանիի այս լիբրետոն 1741 թ. բեմադրել է Կառլո Անտոնիո Գոլդոնին, որը նոր շունչ է հաղորդել Տիգրանի և Միհրդատի պատմությանը (Siranossian & Yervandian, 2014):

Իր իշխանությունն ընդլայնելու համար Միհրդատը՝ Պոնտոսի և Ասիայի այլ մարզերի արքան, պատրաստվել է իր դստերը՝ Կլեոպատրային կնության տալ Հայոց արքա Տիգրանին՝ թագավորությունների միջև բարեկամական կապեր հաստատելու և դաշնակից ձեռք բերելու նպատակով: Վերջինս շատ ոգևորված է Կլեոպատրայի պատկերը տեսնելուց ի վեր: Այստեղից պատմականության շրջադարձ է կատարվում: Իբրև սիրատուհոր՝ Տիգրանը Կլեոպատրային ավելի մոտ լինելու համար մտել է

Միհրդատի բանակ՝ Պարնաս անունով, մասնակցել է ճակատամարտերի, հաղթել է Նիկոմեդեսին (Բյութանիա) և Արիոբարզանեսին (Կապադովկիա): Կլեոպատրան համակրում է Պարնասին, իսկ Միհրդատը, որն ամուրի է, սիրահարված է Ափամիային: Սակայն վերջինս նույնպես սիրում է Պարնասին և հրահրում է Օրոնթեսին ամուսնանալ Կլեոպատրայի հետ:

Կերպարներ

Միհրդատ՝ Պոնտոսի թագավոր, Ափամիայի սիրեցյալը, *Տիգրան*՝ Հայոց թագավոր Պարնաս անվան ներքո, Կլեոպատրայի սիրելին, *Կլեոպատրա*՝ Միհրդատի դուստր, Տիգրանի սիրելին, *Օրոնթես*՝ Սինոպի արքայազն, *Ափամիայի* եղբայրը, Միհրդատի հովանավորյալը, որը սիրում է Կլեոպատրային, *Ափամիա*՝ Օրոնթեսի քույրը, որը սիրահարված է Տիգրանին, *Կլեարտե*՝ Մասքուֆների արքայազն, Միհրդատի դաշնակիցը և Տիգրանի ընկերը, *Արբանթես*՝ Կլեոպատրայի հորեղբայրը (Siranossian, Yervandian, 2014):

Ակտ II. Այգի՝ շատրվաններով, թագավորական պալատի սենյակ, որտեղ Տիգրանն է, քաղաքի տարածաշրջան, որտեղ զինվորական ճամբարներն են, քաղաքի պարիսպներ, որոնք ընկնում են Տիգրանի բանակի հարձակումից:

Կլեոպատրան հուսահատ է, քանի որ չի կարող սիրել իր հոր թշնամուն: Ափամիան և Օրոնթեսը բացահայտում են Պարնաս Տիգրանի ինքնությունը: Օրոնթեսը մերկացնում է սուրը նրան սպանելու համար, սակայն Միհրդատն իր թիկնապահների հետ միջամտում է: Օրոնթեսը հայտնում է, որ Պարնասը ոչ այլ ոք է, քան նրա թշնամու որդին: Տիգրանը չի հերքում և հայտնում է, որ պատրաստ է մեռնել հանուն Կլեոպատրայի սիրո: Զինվորները փակում են նրան բանտում: Ափամիայի խնդրանքով Միհրդատը նրան է վստահում Տիգրանի պատիժը: Կլեոպատրան ուղարկում է Կլեարտեին ազատելու Տիգրանին և հայտնում գաղտնի փախուստի ճանապարհը: Ափամիան խոստանում է ազատ արձակել Տիգրանին, եթե նա սիրո խոստում տա իրեն: Սակայն վերջինս մերժում է, քանի որ իր սիրտն ուրիշին է պատկանում: Ափամիան երգվում է վրեժխնդիր լինել և դատապարտում է նրան մահվան: Մի զինվոր թույն է բերում Տիգրանի համար, սակայն Կլեոպատրան թույլ չի տալիս այդ անել: Նա ասում է, որ սիրում է Տիգրանին և ի տարբերություն Օրոնթեսի, նա պատրաստվում է արքա դառնալ: Արբանթեն զգուշացնում է Օրոնթեսին, որ պալատը շրջապատված է Տիգրանի, Կլեարտեի և մասքուֆների կողմից: Միհրդատը զայրացած լքում է Կլեոպատրային և Ափամիային: Գերությունից ազատված Տիգրանը խոստանում է Միհրդատից և նրա կողմնակիցներից վրեժ չլուծել, եթե նրանք թույլ տան Կլեոպատրային գնալ իր հետ: Կարծելով, որ հայրը՝ Միհրդատը, մահացել է, Կլեոպատրան դրանում մեղադրում է Տիգրանին՝ ստիպելով նրան լքել իրեն, ապա ուշաթափվում է:

Հետաքրքիր փաստեր են պահպանվել օպերայի ստեղծման մասին: Դրանցից մեկի համաձայն՝ հեղինակն այն նվիրել է Հռոմի պապի ազգականուհի դոննա Ֆաուստինա Մատտեյ Կոնտին: Այն առաջին անգամ բեմադրվել է 1724 թ. ձմռանը, Հռոմում, մեծ պարահանդեսի ժամանակ, տարբեր վայրերից ժամանած տասնյակ հազարավոր

հյուրերի ներկայությամբ (Siranossian, Yervandian, 2014): Հեղինակը «Տիգրան Մեծ» օպերան երեք գործողությամբ բեմադրություն է ներկայացրել, սակայն հոգևոր իշխանությունները չափազանց բժախնդրորեն են վերաբերվել հոգևորական հեղինակի ստեղծագործություններին: Օպերայի թեման սերն է, իսկ կղերականների կարծիքով՝ այդ դասին պատկանող Վիվալդիի համար (հայտնի է, որ նա քահանա էր) պատշաճ չէ սիրո մասին գրելը, ուստի կաթոլիկ հայրերի պնդմամբ հանել են օպերայի առաջին և երրորդ գործողությունները (Թովմասյան, 2005): Օպերայի առաջին բեմականացումից հետո 1724 թ. մարտին մահացել է Հռոմի Ինդենցո 13-րդ պապը: Հայտարարված սուգի պատճառով փակվել են բոլոր թատրոնները: «Տիգրան Մեծ» օպերան այդուհետ չի բեմադրվել: Ուշագրավ է, որ պահպանվել են բոլոր դերակատարների անունները (Սահակյան Ս., 2001): Տիգրանի դերերգը կատարել է Պաուլո Մարիանին՝ Ուրբանո քաղաքից, Միհրդատի դերերգը՝ Անտոնիո Բարբերին՝ Ռեջո քաղաքից, Կլեոպատրայինը՝ Ջաջինտո Ֆոնտանան: Բուդապեշտի կամերային օպերայի թատրոնում գրեթե երեք դար հետո (2004 թ.) դերերգերը բաշխվել են այսպես. Տիգրան՝ Արթուր Ստեֆանովիչ (տենոր), Միհրդատ՝ Թիմոթի Բենչ (տենոր), Կլեոպատրա՝ Մոնիկա Գոնզալես (սոպրանո), Կլեարտե՝ Բառնաբաս Հեգուի (կոնտր տենոր) և Սոբանտե՝ Լասլո Հեկլ (բաս) (Թովմասյան, 2010):



Անտոնիո Վիվալդիի «Տիգրան» օպերայի բուդապեշտյան բեմադրության պաստառը, լեյբրոլ ծայնասկավառակի կազմը և մի դրվագ օպերայից (2004 թ.)

1985թ. հունիսի 22-ին Սուրբ Ղազար կղզու Մուրադ-Ռաֆաելյան վարժարանի շքեղ դահլիճում Մարիցա Սանոսյանը մենահամերգով հանդես է եկել՝ առաջին բաժնում կատարելով մեներգ Անտոնիո Վիվալդիի «Տիգրան Մեծ» օպերայից:

Այդ կատարման համար նա արժանացել է ներկաների ջերմ ընդունելությանը, մասնավորապես՝ Մխիթարյան վանական հայրերի և իտալացի երաժիշտների բարձր գնահատանքին (Թովմասյան, 2010): Այս մեներգը կատարելիս երգչուհուն մեծ օգնություն է ցուցաբերել իր նվագակցող դաշնակահար Էֆրեմ Կազազյանը (Գրիգորյան, 2001): Ըստ լիբրետոյի՝ «Տիգրան Մեծ» օպերայի առաջին գործողությունն ունեցել է 13 պատկեր, երկրորդը՝ 14, իսկ երրորդը՝ 9 (Գրիգորյան, 2001):

Օպերայի մուտքը Հայաստան

Մեծ իտալացու «Տիգրան Մեծ» օպերայի թատերականացված համերգային ներկայացումը Հայաստանում տեղի է ունեցել Քրիստոնեության 1700-ամյակի

տոնակատարությունների շրջանակներում անցկացվող միջոցառումների ժամանակ (Արմենյարես, 2001): Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում 2001 թ. նոյեմբերի 22-ին (Գրիգորյան 2001):

Օպերայի ամբողջ պարտիտուրան մշակույթի նախարարությանն ու օպերային թատրոնի ղեկավարությանը չի հաջողվել գտնել: Մնում է միայն ենթադրել, որ օպերայի առաջին և երրորդ մասերը ժամանակի ընթացքում կամ անհետ կորել են կամ ոչնչացվել: Բայց քանի որ մեծ պատիվ է, որ Վիվալդին նման օպերա է գրել հայոց թագավոր Տիգրան Մեծի մասին, թատրոնը չի հրաժարվել այն անգամ կիսատ վիճակում բեմադրել (Բարսեղյան, 2001):

Օպերայի բեմադրության համար երեք միլիոն դրամ է հատկացվել: Օպերային թատրոնի ղեկավարությունը որոշել է օպերայի պահպանված հատվածը ներկայացնել թատերականացված համերգի տեսքով: Թատերականացված համերգի ռեժիսորը



օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեղամ Գրիգորյանն էր: Հետաքրքիր է, որ Տիգրան մեծի դերում կին է երգել: Խնդիրն այն է, որ Վիվալդիի ժամանակաշրջանում տղամարդ երգիչներին ամորձատում էին, որպեսզի նրանց ձայնի դիապազոնը բարձրանա: Եվ կոմպոզիտորները ստիպված այդպիսի ձայների համար էին երաժշտություն գրում: Տղամարդկանց ձայնային հնարավորությունները, բնականաբար, չեն ներել նման ստեղծագործություններ կատարելու համար: Որոշ երկրներում այդ սովորույթը պահպանվում է մինչ օրս: Բայց քանի որ, ըստ օպերայի թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանի, մենք ամորձատած (կաստրատ) երգիչներ չունեինք, և ոչ մի երգչի ձայն չի բավարարել այդ գործը կատարելու համար, Հայոց արքայից արքայի դերում կին է երգել, բնականաբար, ոչ մի հայ տղամարդ նման քայլի չէր գնա, եթե նույնիսկ իմանար, որ աշխարհահռչակ երգիչ է դառնալու (Բարսեղյան, 2001):

Օպերան ներկայացվել է Վիվալդիի ստեղծած երաժշտությամբ՝ սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ: Թատերականացված համերգային սույն կատարման տարբերակում օպերայի դրամատուրգիայի, դրա զարգացման, ինչպես և գործողության դերը ստանձնել է գործող անձերից մեկը՝ պատմաբան Կարեն Միրզոյանը: Դերերում հանդես են եկել Տիգրան Մեծ՝ Նաիրա Անանիկյան, Կլեոպատրա՝ Էմմա Պապիկյան, Օրոնտես՝ Նունե Բադալյան, Ապանիա՝ Իրինա Զաքիյան, Միհրդատ՝ Ռուբեն Նուրիջանյան, Կլեարտ՝ Ռոզա Հովսեփյան: Ներկայացումը ղեկավարել է օպերային թատրոնի դիրիժոր Կարեն Դուրգարյանը: Օպերայի պարտիտուրի հատվածները բերվել են Հայաստան, հանձնվել կառավարությանը, ապա Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ նախագահը, մշակույթի,

երիտասարդության հարցերի, սպորտի նախարարը և այլ անձինք (Հովհաննիսյան 2001):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով Տիգրան Մեծի կերպարը Վիվալդիի օպերայում ապացուցվում է, որ լիբրետոյի եվրոպացի հեղինակների և կոմպոզիտորների հետաքրքրվածությունը Տիգրան Մեծի կերպարի հանդեպ պայմանավորված էր հունահռոմեական հեղինակների կողմնակալ, Հռոմի շահերն սպասարկող աղբյուրների նյութերով: Բայց դա չի խանգարել եվրոպացի հեղինակներին, որ Հայաստանի հզորագույն արքայից արքայի անվանակիր սցենարով ստեղծագործություն ստեղծեն:

Վիվալդիի «Տիգրան» օպերան գալիս է հաստատելու, որ ազգն ու երկիրը պիտի մշտապես հիշեն ու գիտակցեն իրենց ինքնության սրբազան առաքելությունն ու դրա դերակատարներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Արմենյարես** (2001). Վիվալդիի Տիգրան Մեծ օպերայով եզրափակվեց Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների պետական ծրագիրը, «Արարատ» ամսագիր, Բուդապեշտ, 31 դեկտեմբեր.
- Բարսեղյան Լ.** (2001). Մենք կրտած երգիչներ չունենք, այդ պատճառով այսօր Տիգրան Մեծի դերում կին է երգելու, Անտոնիո Վիվալդիի գրած «Տիգրան Մեծ» օպերայի համերգային տարբերակը բեմադրելու մասին, «Հայկական ժամանակ» թերթ, 22 նոյեմբեր.
- Գրիգորյան Վ.** (2001). Վիվալդիի «Տիգրան» օպերան, «Ազգ» թերթ, 21 նոյեմբեր.
- Թովմասյան Վ.**, (2010). Անտոնիո Վիվալդիի «IL TIGRANE» օպերան, Տիգրան Մեծ, մեկ աշխատանքի ցուցահանդես, «Աշխարհի հայ նկարիչների միավորում», հ/կ Երևան.
- Թովմասյան Վ.** (2005). Վիվալդիի «Տիգրան Մեծ» օպերան, «Շիրակ-Բերյուս», ամսագիր, հոկտեմբեր-դեկտեմբեր.
- Հովհաննիսյան Թ.** (2001). Տոնակատարությունները եզրափակվեցին Վիվալդիի «Տիգրան» օպերայով «Ազգ» թերթ, 23 նոյեմբեր.
- Սահակյան Ս.** (2001). Մեծ իտալացու օպերան մեծ հայորդու մասին, «Երթ» շաբաթաթերթ, 26 նոյեմբեր-2 դեկտեմբեր.
- Justini** (1823). Historiarum philippicarum ex Trogo Pompeio libri VLIV. Textum wemzelianum, Tabulas chronologicas argumenta, prologos, notas, indices reum et verlorum. Novis additamentis illustravit N. E. Lemaire, Parisiis.
- Michael Talbot** (2011). The Vivaldi Compendium, The Boydell press, Great Britain, biography <https://books.google.am/books?id=IYypmdoyPqYC&printsec=copyright&hl>
- Pierre Corneill** (1651). Nicoéde, tragédie, Paris.
- Sarti, Giuseppe** (1936). Enciclopedia Italiana [https://www.treccani.it/enciclopedia/giuseppe-sarti_\(Enciclopedia-Italiana\)/](https://www.treccani.it/enciclopedia/giuseppe-sarti_(Enciclopedia-Italiana)/)

Siranossian A., Yervandian M. k., (2014). Les métamorphoses de Tigrane les hommes et leurs oeuvresh, vol. 2, sources d'Arménie, Lyon.

REFERENCE LIST

- Armenpress** (2001). Opera Vival'di «Tigran Mec» zavershila gosudarstvennuyu programmu prazdnovaniya 1700-letiya provozglasheniya hristianstva gosudarstvennoj religiej v Armenii (*Vivaldi's opera "Tigran Mets" completed the state program of celebrating the 1700th anniversary of the proclamation of Christianity as the state religion in Armenia*), zhurnal «Ararat», Budapesht, 31 dekabrya.
- Barsegyan L.** (2001). U nas net podgotovlennyh pevcov, poetomu segodnya partiyu Tigrana Velikogo ispolnit zhenshchina, o postanovke koncertnoj versii opery Antonio Vival'di "Tigran Velikij" (*U nas net podgotovlennyh pevcov, poetomu segodnya partiyu Tigrana Velikogo ispolnit zhenshchina, o postanovke koncertnoj versii operay Antonio Vival'di "Tigran Velikij"*), gazeta "Ajakan zhamanak", 22 noyabrya.
- Grigoryan V.** (2001). Opera Vival'di «Tigran» (*Opera Vival'di "Tigran"*), gazeta «Azg», 21 noyabrya.
- Tovmasyan V.** (2010). Opera "IL TIGRAN" Antonio Vival'di, Tigrana Velikogo, vystavka odnoj raboty (*Opera "IL TIGRAN" by Antonio Vivaldi, Tigran the Great, exhibition of one work*), "Associaciya armyanskikh hudozhnikov mira", g/o Erevan.
- Tovmasyan V.** (2005). Opera Vival'di «Tigran Velikij» (*Vivaldi's opera "Tigran the Great"*), «SHirak-Bejrut», zhurnal, oktyabr'-dekabr'.
- Oganesyan T.** (2001). Torzhestva zavershilis' operoj Vival'di «Tigran» (*The celebrations ended with Vivaldi's opera "Tigran"*), Gazeta «Azg», 23 noyabrya.
- Saakyan S.** (2001). Opera velikogo ital'yanca o velikom armanine (*Opera by a great Italian about a great Armenian*), ezhenedel'nik "Ert", 26 noyabrya-2 dekabrya.
- Justini** (1823). Historiarum philippicarum ex Trogo Pompeio libri VLIV. Textum wemzelianum, Tabulas chronologicas argumenta, prologos, notas, indices reum et verlorum. Novis additamentis illustravit N. E. Lemaire, Parisiis.
- Michael Talbot** (2011). The Vivaldi Compendium, The Boydell press, Great Britain, biography <https://books.google.am/books?id=LYypmdoyPqYC&printsec=copyright&hl>
- Pierre Corneill** (1651). Nicoéde, tragédie, Paris.
- Sarti, Giuseppe** (1936). Enciclopedia Italiana [https://www.treccani.it/enciclopedia/giuseppe-sarti_\(Enciclopedia-Italiana\)/](https://www.treccani.it/enciclopedia/giuseppe-sarti_(Enciclopedia-Italiana)/)
- Siranossian A., Yervandian M. k.**, (2014). Les métamorphoses de Tigrane les hommes et leurs oeuvresh, vol. 2, sources d'Arménie, Lyon.

ABSTRACT

THE IMAGE OF TIGRAN THE GREAT IN VIVALDI'S OPERA MARTIROSYAN M.

Tigran the Great is one of the most powerful Armenian rulers, whose image was of most interest to Greco-Roman authors and served as a source of inspiration for European cultural figures. Rich evidence of this is the artistic and historical manifestations of the image of this outstanding ruler in European musical art.

The object of research is the image of Tigran the Great.

The purpose of the study is to analyze the comprehensive influence of the image of Tigran the Great in European musical art.

Served as the methodological basis of the research historical-comparative-chronological, descriptive, analytical-comparative, source-scientific (Justin, «Philip's Histories» Book XXXVIII, Francesco Silvani *La virtù trionfante dell'amore e dell'odio overo Il Tigrane* drama) methods.

The study found that European musicians created 41 operas, many of which featured the Armenian king Tigran the Great as the main or participating character. The composers were interested in the historical figure of Tigran the Great, inspired by the materials in the works of Greek-Roman authors. The article specifically presents the presentation of the historical figure of Tigran the Great by the famous composer Antonio Vivaldi, the basis of which is the work "Parallel Biographies" by the historian Plutarch.

Key words: Tigran the Great, Cleopatra, Mithridates, Antonio Vivaldi, Nicola Romaldi, Benedetto Michel, Francesco Silvani, opera, music.

РЕЗЮМЕ ОБРАЗ ТИГРАНА ВЕЛИКОГО В ОПЕРЕ ВИВАЛЬДИ *МАРТИРОСЯН М.*

Тигран Великий – один из самых могущественных армянских правителей, образ которого больше всего интересовал греко-римских авторов и служил источником вдохновения для европейских деятелей культуры. Многосодержательными свидетельствами этого являются художественно- исторические проявления образа этого выдающегося правителя в европейском музыкальном искусстве.

Объектом исследования является образ Тиграна Великого.

Цель исследования - проанализировать всестороннее влияние образа Тиграна Великого в европейском музыкальном искусстве.

Методологической основой работы послужили историко-сравнительно-хронологический, аналитико-сравнительный, источниковедческий (Юстин, «Истории Филиппа» Книга XXXVIII, Франческо Сильвани *La virtù trionfante dell'amore e dell'odio overo Il Tigrane* драма) методы.

В результате исследования было установлено, что европейские музыканты создали 41 оперу, во многих из которых армянский царь Тигран Великий был представлен как

главный или участвующий герой. Историческая личность Тиграна Великого интересовала композиторов по материалам, имеющимся в произведениях греко-римских авторов. В статье конкретно представлено обращение всемирно известного композитора Антонио Вивальди к историческому персонажу Тиграна Великого, ключом к которому являются «Параллельные жизнеописания» историка Плутарха. По либретто Вивальди это история любви царя Тиграна Великого и Клеопатры дочери понтийского царя Мирдата. И хотя в оригинальном либретто действительность была представлена перевёрнутой, опера получила известность, жила и исполнялась много раз даже в наши дни.

Ключевые слова. Тигран Великий, Клеопатра, Митридат, Антонио Вивальди, Никола Ромальди, Бенедетто Мишель, Франческо Сильвани, оперное искусство, музыка.